



## ԳՐԻԳՈՐ ԱՐԾԱԿԻ ՀԱԿՈԲՅԱՆ

### **ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼՈՒ «ՆՈՐԱՀՐԱՇ ՊՍԱԿԱԽՈՐ» ԵՎ «ԱՐԻԱՑԵՍԼՔ» ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ**

Հայ ժողովրդի պատմության մեջ Ավարդի պատերազմը աննախընթաց հերոսական, սահմանակի էջերից մեկն է: Այստեղ ազատասեր ժողովուրդը կենաց և մահու անհավասար կովի է մտնում պարսից հզոր ու զավթողական բանակի հետ՝ հանուն իր ազգային հոգևոր մշակույթի, պետական անկախության և հայրենիքի:

Ազգային-ազատագրական այդ հերոսական ճակատամարտի պատմությունը սրտառուց ձևով գրի է առել Եղիշեն՝ իր «Վարդանանց պատմութիւն»-ը գրքում:

Սկսած 5-րդ դարից մինչև մեր օրերը, Եղիշեի այս գիրքը միշտ է եղել է մեր հնատագա պատմագիրների ու գրողների ոգեշնչման առարկան: Ավարդի ճակատամարտը, մասնավորապես Վարդան Մամիկոնյանի կերպարը թեմաներ են հանդիսացել մեր բազմաթիվ գրողների համար: Այդ պատերազմի հերոսներին նվիրված առաջին բանաստեղծությունները գրել են Ներսես Շնորհապետ, որոնք հայունի են «Նորահրաշ պատմակատր» և «Արիացեսլք» վերնագրերով:

... «Նորահրաշ պատմակատր»-ը մտնում է «Օրինալին»-ների կարգում և երգվում է ամեն տարի մի անգամ, Բուն Բարեկենդրացին՝ Վարդանանց տոնի օրը: Այս շարակացի բնորոշ առավելություններից մեկն էլ այն է, որ Բեղինակը գովերգում ու փառաբանում է ոչ միայն զորագույն Վարդանին կամ նրա հետ Շավարշան դաշտում ընկած միայն նշանավոր մարդկանց, ինչպես հետագայում շատերն են արել, այլև բոլոր այն հասարակ հայ զինվորներին, որոնք չեն խնայել իրենց կյանքը հայրենիքի համար:

Հայրենասիրական այս մարտերը չի

սահմանափակվել միայն եկեղեցու շրջանակներում, այն մտել է ժողովրդի մեջ և ժողովրդականացել: «Նորահրաշ»-ը երգվել է հանդեսներում, զորահանդեսներում, տներում և քեմերում Վարդանանց ներկայացումների ժամանակ: Թե ինչպես այս շարականը անմազելի կապված է եղել Վարդանանց ճակատամարտի հետ, երևում է մի հայտնի փառատարդիթց, որը 15-րդ դարի գործ է: «Հայ ժողովրդի պատմության» Ա. գրքում մի մանրանկար կա' որ տեղ պատկերված է «Ավարդի ճակատամարտը»: Նկարի ներքեւում գրված է «Նորահրաշ պատմակատր և զօրագլուխ առաքինաց վառեցար զինու...»՝ բառերը: Այս նշանավոր մանրանկարը ցուց է տպիս, որ Շնորհապետ շարականը իսկապես շատ սիրված ու մասապականացված է եղել: Նա կրել է ազգային, ժողովրդական բնույթը:

... Բանաստեղծության առաջին տունը նվիրված է հայոց բանակի զորագլուխ Վարդան Մամիկոնյանին, որն անձնուած կերպով, հոգու և իսկական զենքով արիաբար գնում է մահվան դեմ: Իր հերոսական մասով՝ «քաջ նահատակը» վանում է թշնամուն հայրենի երկրից:

«Նորահրաշ պատմակատր և զօրագլուխ առաքինաց, Վառեցար զինու հոգույն արիաբար ընդդեմ մահու, Վարդան, քաջ նահատակ, որ վանեցեր զթշնամին,

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմություն», 1 գիրք, Երևան, 1951, էջ 109:

Վարդագոյն արեամբ քո պսակեցեր  
զեկեղեցի»<sup>2</sup>:

Նկատելի է, որ Վարդանին նվիրված առաջին տաճ մեջ Ծնորհային գեղեցիկ կերպով հաճախակի գործածում է հերոսի անվան առաջին տաճ՝ «Վ» բաղադայնով մկանող արտահայտությունները, որոնք ավելի վառ են դարձնում պատերազմի ամենաճշանավոր հերոսի՝ «Կարմիր Վարդանի» պատկերը:

Պատերազմում երկրորդ գնդի գորագույնը եղել է Խորեն Խորխոռութիւն: Բանաստեղծը գեղեցիկ մակուրներով ցուց է տալիս Ավարայրի և այս հերոսի՝ Խորենի քաջորդյունն ու հոգեկան բարեմասնությունները.

«Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ  
պատերազմին,  
Խոհական իմաստութեամբ. խոհեմացեալ  
անձառապէս.  
Խորէն խորհրդական և ծանուցեալ անոն  
բարի,  
Խաչելոյն վկայ եղեալ՝ հեղմամբ արեան  
պասկեցաւ»<sup>3</sup>:

Այստեղ էլ Ծնորհային հաճախակի գործածում է Խորենի անվան սկզբնատառ «Խ» բաղադայնը:

Երրորդ անոնք մի որիշ ճշանավոր հերոսի՝ Արտակի մասին է: Արի Արտակը նոյնպես հերոսաբար ընկնում է մարտի դաշտում և ներկվում աղբյուրի նման բխող բոսրագույն արյան մեջ.

«Մենական լուսով լցեալ արիացեալն քաջն  
Արտակ,  
Թաթաւեաց ի կարմրութիւն բոսրագոյն  
բղյեալ աղբերն...»<sup>4</sup>:

Չարականի մնացած տներում գովերգվում են Ավարայրի հերոսներ Հմայակ Դիմաքսյանը, Տաճատ Գնթունին, Վահան Գնոնին, Արտենը, Գարեգին Սրբանձտյանը՝ համապատասխան մակուրներով ու փառաբանոյամբ:

Ինչպես ճշլեց, բանաստեղծության նախավերջին տունը ճշանավոր է երանով, որ այստեղ գովերգվում ու փառաբանվում են բոլոր շարքային մարտիկները, որոնք արիաբար ընկել են Ավարայրի դաշտում, զուել իրենց կամքը հայրենիքի համար.

«Բամկական խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից՝  
Որք ընդ նոսին նահատակեալ արիաբար  
պատերազմաւ,  
Եւ հեղին զարինս իրեանց ի նորոգումն  
եկեղեցոյ,  
Ընդ նոսին պսակելով ի երկնաւոր  
հանդիսադրէն»<sup>5</sup>:

Հմոռանանք հիշել, որ այս բանաստեղծության 10 տների գլխագործից ստացվում է «Ներսէսի երգ» կապակցությունը:

«Նորահրաշ»-ի ամբաժան մասն է կազմում Ծնորհայու մի որիշ, փոքրիկ գործ «Արիացեալը» անունով, որ «Մանկունք» շարականով է և «ասեղի», այսինքն երգվում է ծանր և վեճ եղանակով:

Հազկերտ 2-րդը և պարսից ավագանին հայոց նախարարներին խարեւությամբ կանչում են պարսից դուռը և ստիպում ուրանալ իրենց հավատը: Նախարարները վերադասնում են Հայաստան, պատրաստվում են և դուրս գալիս թշնամու դեմ՝ երկիրը «ասօրենների բնություններից և նեղություններից» պատելու համար: Ահա դրա համար էլ բանաստեղծը երգում է, որ պեսոք է մենք ցնծանք այդ պատարար ու արդար կուի հայթությամբ:

«Արիացեալը առ հակառակս.  
Քաջութեամբ առնուզ զվրէժ խարեւութեան,  
Հանճարեղը ի հասուցումն դաւանանցն,  
Զամբարշտացն արդարադատ  
չափմամբ...»<sup>6</sup>:

Բացի Վարդանանց երկու շարականից, Ծնորհային գրել է նաև Ղևոնդյանց քահանա նահատակների վերաբերյալ երգեր, որոնք երգվում են եկեղեցում՝ Ղևոնդյանց տոնի օրը:

Ինչպես Ղևոնդյանց նահատակությունը հանդիսանում է Վարդանանց պատերազմի շարունակությունը, այնպէս էլ այս երգերը իրենց էությամբ ու ոգով կազմում են «Ծո-

<sup>5</sup> Չարականի այս տաճ թվերը Ծնորհային վեցըրեկ է Եղիշէի մետկալ տվյալներից. «Այս երկերինը ուստանակ և եթեն նահատակը, ընդ իմն մեծամեծ նախարարն անդէն ի տեղուցն կատարեցան... Թող զայս... և այլս եթեն նարեկ և քսաստն այր որը զանուան իրաքանչիւր ի դպրութիւն կենաց զրեցին ի նմին աւոր ի մեծ պատերազմին: Եւ միամասուն լին ամենայն հազար և երեսուն և վեց» (Եղիշէ, Պատմութիւն Վարդանանց, Թիֆլիս, 1913, էջ 156):

<sup>6</sup> «Չարական», էջ 463:

<sup>7</sup> Անդ, էջ 462:

<sup>2</sup> «Չարական», էջ 462:

<sup>3</sup> Անդ:

<sup>4</sup> Անդ:

բարիաշ»-ի և «Արիացեալք»-ի անբաժանելի մասը:

Աւոնդյանց շարականների մեջ բանաստեղծը Հազկերտին համեմատում է անընդդրային վիշտայի, անգոյթ փարավոննի մեռ: Նա մոգերի չար խորհուրդներով գազանացել, կատաղել է: Սակայն Աւոնդյանը, Վարդան Մամիկոնյանի ավանդներին և իրենց հայուններին հավատարիմ, «յաշխարօքէն պատերզամի ախոյշան»-ի դեմ չեն ընկածում և հերոսարար ընդունում են մահը:

Մի որիշ իրիկական շարական երգի մեջ, որը պատկանում է «Համբարձի»-ների կարգին, բանաստեղծը հավերժ ներքողներ է ձոնում Աւոնդյանց հերոսներին և պարծենում երանց անվամբ.

«Երգեմ ձեզ երգս, ըգհրեշտակական ըզձայն, Յաւերժս և վայելուս, մտերիմս և ներբողեանս Ով սուրբ Աւոնդեանը: Սուաւել պարծիմք ձեօք...»<sup>8</sup>:

Ինչպես տեսնում ենք, Վարդանանց և Աւոնդյանց նվիրված շարականները միայն կուռական չեն: Այսուեղ բանաստեղծը երգում է համազգային մեծ հերոսներին, նրանց քաջորդությունը, անձնորացությունն ու հայրենասիրությունը:

<sup>8</sup> Անդ, Էջ 468:

### ԾԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Նորահրաշ պատակատը և զօրագլուի տապաքինեաց.  
Վատեցար զինու հոգույն արիաբար ընդդէմ մահու.  
Վարդան բաջ հանատակ որ վաճեցեր զթշնամին.  
Վարդագոյն արեամբ քո պասկեցեր զեկեղեցի:

Երկնաւոր թագաւորին զինու յաղթեալ պատերազմին.  
Խոհական իմաստութեամբ խոհեմացեալ անձառապէս.  
Խորէն խորհրդական և ծանոցեալ անոն բարի.  
Խաչելոյն վկայ եղեալ հեղմամբ արեան պատկեցաւ:

Ռենական լուսով լցեալ արիացեալն քաջն Արտակ.  
Թաթաւեալ ի կարմրութին բուրպային բղխեալ աղբերն.  
Զիրկականն ըմպեալ զրածակ և մկրտեալ արեամբն իրով.  
Դասակցեալ ընդ անմարմնոցն Երրորդութեան երգել զփառ:

Սրբափալ զգեստու պճնեալք ի յերկնաւոր հանդիսադրէն.  
Երրորդութեամբն զօրացեալ՝ վանեալ զամուրս բանարկութին.  
Հմայեակ հօր ընծագեալ՝ որդոյ գոլով չարչարակից.  
Հոգուվն յաղթեալ պատերազմին և շարասէր թագաւորին:

Էական բարույն դիտմամբ ընդդէմ մեղացն վառեցաւ.  
Տարագնաց եկիր յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն.  
Տաճառ զարմանայի տաճար եղեալ Երրորդութեանն.  
Տէրութեան սուրբ խորհրդոյն տուն և տեղի արժանացեալ:

Ստացեալ զիաւատոյ Վահան հուսոյն զրամիւք ծածկեալ.  
Զիրկականն սաղաւարտ ի գլուխ եղեալ զնշան խաչին.  
Վահան վեհ երևեալն որ մամկութեամբ հանատակեալ.  
Խաչելոյն վկայ եղեալ՝ պասկեցաւ արեամբն իրով:

Ի հոտ անուշ ողջակիզեալ մատուցանէր զինքն նուր.  
Բանաւոր պատարագաւ ընծավելով Հօր ի յերկինս.  
Արտէնն ցանկալի արդարութեամբն ճոխացեալ.  
Ինաստութեամբ պայծառացեալ լեօթնարփեան շնորհաց Հոգուն:

Երկորումք հարազատովք ընտրելագոյն նահատակօք.  
Յառաջեալ յամենեցունց գլուխ և աւարտ մարտիրոսաց.  
Նախաշախիղ գոյով բարեաց յառաջադէնն Գարեգին.  
Ընկալեալ զբրաբիոնն յաղթանակ նահատակացն:

Ռամկական խումբ հազարաց և երեսնից թիւ ընդ վեցից.  
Որք ընդ նոսին նահատակեալ. արիաբար պատերազմաւ.  
Եւ հեղին զարիւն իրեանց ի նորոգումն եկեղեցւոյ.  
Ընդ նոսին պաակելով ի յերկնաւոր հանդիսադրէն:

Գոհութեամբ փառատրութիւն Երրորդութեանդ նագենք.  
Բազմութեամբ պաակելոց զմեօք մածեալ առաքինեացու.  
Եկեղեցիք Հայաստանեաց պայծառապէս զարդարեցան.  
Ունելով միշտ բարեխոս զնգմութիւն մարտի սոցա:

